

ՄԻԶԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑ՝

ՀԵՌՈՒՄՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ
ՆՐԱ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ԴԵՍ
ՈՒՂՂՎԱԾ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Սույն զեկույցը դիտարկում է Հայաստանում հանրապետական ծածկույթ ունեցող երեք՝ Հանրային, «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերությունների կողմից Սերժ Սարգսյանի պաշտոնավարման ամփոփման լուսաբանումը: Չեկույցի նպատակն է պարզել՝ ինչպես են վերոնշյալ հեռուստաընկերությունները լուսաբանում Սերժ Սարգսյանի կառավարման տասը տարին. օբյեկտիվորե՞ն, թե՞ բացառապես դրական համատեքստում: Միաժամանակ զեկույցը նպատակ ունի պարզել, թե արդյո՞ք վերոնշյալ երեք հեռուստաընկերություններով լուսաբանվել է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քայլարշավը, որի նպատակն է կանխել Սերժ Սարգսյանի առաջադրումը որպես վարչապետ, և համանման նպատակ հետապնդող «Սերժիր Սերժին» սոցիալական նախաձեռնությունը:

«Իրազեկ քաղաքացիների միավորումը» 2018թ. մարտի 31-ից մինչև ապրիլի 9-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում մոնիտորինգի է ենթարկել «Արմենիա», «Շանթ» և Հանրային հեռուստաընկերությունների՝ երեկոյան ժամը 18:00-24:00-ի ընթացքում թողարկվող լրատվական և ոչ լրատվական հաղորդումները: Մշտադիտարկման համար ընտրվել են այս երեք հեռուստաընկերությունները՝ որպես համապետական սփռում և հեռուստադիտողների շրջանում առավել մեծ հանրաճանաչություն ունեցող լրատվամիջոցներ:

Հանրային հեռուստաընկերություն

«Օրակարգ»

«Օրակարգ» հաղորդման՝ ապրիլի 4-ի ժամը 21:00-ի [թողարկման](#) առաջին հատվածում ցուցադրվել է «Հայաստանի զարգացման ռազմավարություն 2030» ռեպորտաժ, որի ընթացքում Սերժ Սարգսյանը, խոսելով մոտակա 10 տարիների զարգացումներից, նշել է. «Հատկապես պետք է ծրագրով ներառված լինի երիտասարդների շրջանում գործազրկությունը, եթե չասեմ զրոյի հասցնելու, համենայն դեպս, զգալիորեն կրճատելու համար»: Ավելի քան 3 րոպե տևողությամբ այս ռեպորտաժը լուսաբանում էր Սարգսյանի մտքերը ապագայի վերաբերյալ՝ սովորի կրճատում, 2040-ին՝ 4 միլիոնանոց Հայաստան, նոր աշխատատեղերով աղքատության նվազում և այլն:

Հանրային հեռուստաընկերության «Օրակարգ» հաղորդման՝ ապրիլի 6-ի, ժամը 21:00-ի [թողարկումն](#) անդրադարձել է Սերժ Սարգսյանի և Իտալիայի նախագահի հանդիպմանը, այնուհետև Սուրբ Աթոռում դեսպան Միքայել Մինասյանը իր շնորհակալական խոսքի ժամանակ «առանձնահատուկ շնորհակալություն» է հայտնում Հայաստանի Հանրապետության նախագահին այս ծրագրի (խմբ. Նարեկացու արձանի տեղադրումը Վատիկանում) խթանը հանդիսանալու համար: Մինասյանը նաև նշում է, որ իր խորին երախտագիտությունն է հայտնում Նորին Սրբություն Ֆրանցիսկոսին՝ հիշատակելով նրան իր աղոթքների մեջ: Այնուհետև ներկայացվում է նախագահ Սարգսյանի հարցազրույցը արաբական Gulf News օրաթերթի և Global FDI թերթերի հետ: «Օրակարգի» հաղորդավարը, հղում կատարելով «Արմենպրես»-ին, նշում է. «Նախագահ

Սարգսյանը պատմել է, թե ինչպես իր պաշտոնավարման սկզբում՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում, ոտքի կանգնեց Հայաստանի տնտեսությունը»։ «Օրակարգը» նաև անդրադառնում է արաբական թերթերին Սերժ Սարգսյանի տված



մեկնաբանությանը, ըստ որի՝ կոնսուլիդացնելով ռեսուրսները համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո, 2010 թվականին արդեն կարողացել էինք աճ գրանցել. «Մենք ցանկացանք այդ մարտահրավերը վերածել հնարավորությունների և ճգնաժամից դուրս գալ վերակառուցված տնտեսությամբ»։

Այնուհետև նա նշել էր, որ համբերատար և սկզբունքային քաղաքականության արդյունքն էր, որ Հայաստանն ընտրեց մասնակցությունը ԵԱՏՄ-ին, իսկ 2017թ.նոյեմբերին ստորագրեց Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագիրը Եվրամիության հետ։

«Օրակարգ» հաղորդման՝ ապրիլի 7-ի, ժամը 21:00-ի [թողարկման](#) առաջին մասը նույնպես նվիրված էր Սերժ Սարգսյանին։ Թողարկման ընթացքում նախ նախագահ Սարգսյանի և



վարչապետ Կարապետյանի հանդիպման մասին խոսելիս նշվում է, որ կառավարության առջև դրված մակրոտնտեսական բոլոր խնդիրները կատարված են։ Հաջորդ ռեպորտաժում ներկայացվում է «մատչելի բնակարան

երիտասարդ ընտանիքներին» ծրագիրը, որում շեշտվում է, որ ծրագիրը նախաձեռնել է Սերժ Սարգսյանը։ «Այսօրվա խորհուրդը մի փոքր ավելի այլ է, մենք ամփոփում ենք այսօր վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանի հովանու ներքո գտնվող սոցիալական ծրագրերը առհասարակ», - ասում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի փոխնախարար Արսեն Բարամյանը։ «Նախագահի պաշտոնում սա Սերժ Սարգսյանի վերջին օրն էր՝

երիտասարդների կողքին»,- նշում է «Օրակարգը»: Ընդհանուր առմամբ ողջ ռեպորտաժը



Սերժ Սարգսյանի անձի գովաբանում է, քան լրատվություն:

«Օրակարգի» ապրիլի 9-ի թողարկումը, հղում անելով վարչապետ Կարեն Կարապետյանին, տեղեկացրեց այն մասին, որ Սերժ Սարգսյանն է ՀՀ վարչապետի թեկնածուն:

«Օրակարգը» չի ներկայացնում հավասարակշռված տեղեկատվություն ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՈՂ ԲՈՂՈՔԻ ԱՆՍԻՆ: Մշտադիտարկված ժամանակահատվածում «Օրակարգը» Սերժ Սարգսյանին լուսաբանող ռեպորտաժների ընթացքում քննադատական որևէ տեսակետ չի հնչեցրել: Չեն ներկայացվել Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին եղած ձախողումների կամ չկատարված խոստումների մասին տվյալներ: Ավելին՝ ձախողումները հաճախ ներկայացվել են որպես դրական ձեռքբերումներ:

Հանրային հեռուստաընկերությունը մարտի 31-ից ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում «Օրակարգի» հիմնական թողարկումների շրջանակում չի լուսաբանել ՔՊ կուսակցության քայլարշավը կամ «Մերժիր Մերժին» նախաձեռնության գործողությունները:

360°

Հանրային հեռուստաընկերության 360° հաղորդման ապրիլի 8-ի թողարկումն անդրադառնում է Սերժ Սարգսյանի կառավարման տասը տարիներին: Դրանցից առաջինը ներկայացնում է Սերժ Սարգսյանի այցը Վատիկան՝ Գրիգոր Նարեկացու արձանի բացման արարողությանը ներկա գտնվելու նպատակով: Այս ռեպորտաժի ընթացքում Սերժ Սարգսյանը ներկայացվում է որպես Նարեկացու արձանը Վատիկանում տեղադրելու գործի նախաձեռնող: Ուշագրավ է, որ ռեպորտաժը ավելի շատ

անդրադառնում է Սերժ Սարգսյանին՝ նրան անվանելով «առաջին քրիստոնյա երկրի ղեկավար», քան արձանի հեղինակին՝ Դավիթ Երևանցուն, կամ Զոռմի պապին: Ռեպորտաժն առավել կենտրոնացած է Սերժ Սարգսյանի անձի, քան բուն արձանի բացման արարողության վրա:

Այնուհետև 360°-ը ամփոփում է Սերժ Սարգսյանի նախագահության տասը տարիները: Հաղորդավարը նախքան ռեպորտաժի սկիզբը շեշտում է, որ Սարգսյանի նախագահության օրոք բանակը արդեն հենվում է «հայրենական ռազմաարդյունաբերության վրա», «զինանոցը համալրում է աշխարհի ամենանոր զինատեսակներով», «առաջին անգամ մշակել ու գործի է դրել արդիականացման երկարաժամկետ յոթ տարվա ծրագիր»: Սերժ Սարգսյանի տասնամյա նախագահությունը ամփոփող հատվածը սկսվում է «Չինված ուժերը մեկ տասնամյակում. թիկունք և առաջնագիծ» վերնագիրը կրող ռեպորտաժով, որտեղ պարբերաբար շեշտվում է Սերժ Սարգսյանի օրոք բանակի արդիականացումն ու նորագույն զինտեխնիկայի ձեռքբերումը:

Ուշագրավ է, որ ռեպորտաժը արդիականացման ծրագիրը ներկայացնում է որպես Սերժ Սարգսյանի տասնամյա պլան. որևէ կերպ չի նշվում, որ 2016 թվականի ապրիլն է եղել արդիականացման հիմնական շարժառիթը: Ավելին, ռեպորտաժը 2016 թվականի ապրիլը ներկայացնում է որպես փորձություն, որի ընթացքում հայկական բանակը «թշնամուն հասցրել է մոտ ութ անգամ ավելի կորուստ»: Ռեպորտաժը որևէ կերպ չի անդրադառնում 2016թ. ապրիլին Հայաստանի կրած տարածքային կամ մարդկային կորուստներին, չի քննարկում բանակում առկա խնդիրները, որոնք բազմիցս բարձրաձայնվել են առցանց լրատվամիջոցներում: Սերժ Սարգսյանը, ով ՀՀ երեք նախագահներից միակն է, ում օրոք արձանագրվել է տարածքային կորուստ, ներկայացվում է որպես Հայաստանի անվտանգությունը ամրապնդող «գերագույն գլխավոր հրամանատար»:

Այնուհետև Հանրային հեռուստաընկերությունն ամփոփում է ՀՀ դիվանագիտությունն անցած 10 տարում՝ նշելով. «Արևմուտք-Ռուսաստան դիմակայության ամենաթեժ պահին պաշտոնական Երևանը կարողացավ «կամ-կամ»-ի դժվար երկընտրանքից դուրս գալ հաղթական «և-և»-ով»: Այս ռեպորտաժի ընթացքում Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին և Հայաստան-Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված համագործակցության համաձայնագիրը ներկայացվում են որպես Սերժ Սարգսյանի օրոք Հայաստանի ձեռք բերած լուրջ դիվանագիտական հաղթանակներ՝ «և-և»-ի սկզբունքով: 360°-ի ապրիլի 8-ի թողարկման շրջանակում Հայաստանի տնտեսության մասին ռեպորտաժում Սերժ Սարգսյանը ներկայացվում է որպես 2008թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը մեղմող քայլերի նախաձեռնող: ՀՀ աճող արտաքին պարտքը ռեպորտաժում ներկայացվում է որպես համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանք, այլ ոչ թե սխալ ներքին տնտեսական քաղաքականության հետևանք:

360°-ը ապրիլի 8-ի եթերից 39,5 րոպե տրամադրել է Սերժ Սարգսյանի նախագահության տասը տարիները լուսաբանելուն: Հիշեցնենք, որ 360°-ի ընդհանուր տևողությունը 44 րոպե է: Սերժ Սարգսյանին նվիրված 39,5 րոպեի ընթացքում չկա որևէ

քննադատական անդրադարձ: Անգամ 2017թ. խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ Ընտրությունների դիտարկման առաքելության զեկուլյցին հղում կատարելիս Հանրային հեռուստաընկերությունը մեջբերում է զեկուլյցի բացառապես դրական մասերը:

«Մտքով տուն»

Հանրային հեռուստաընկերությունը ապրիլի 8-ի երեկոյան հեռարձակել է նաև Սերժ Սարգսյանին նվիրված «Մտքով տուն» [ֆիլմը](#), որի ընթացքում Սերժ Սարգսյանը ներկայացվել է բացառապես դրական երանգներով: Այս ֆիլմում Սերժ Սարգսյանը ներկայացվում է որպես հակամարտության տարիներին մեծ ներդրում կատարած մարդ: Հաղորդումն ավարտվում է Արցախյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ Սերժ Սարգսյանի դիտարկումներով:

«Արմենիա» հեռուստաընկերություն

«Ժամը» լրատվական

Հեռուստաընկերության «Ժամը» լրատվական ծառայությունը մարտի 31-ից ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում միայն դրական տոնով է լուսաբանել Սերժ Սարգսյանի գործունեությունը: Ներկայացվել են Սերժ Սարգսյանի հանդիպումներից հատվածներ, որտեղ վերջինս խոսում է երիտասարդների աշխատանքային խնդրի լուծման կարևորության, աղքատության Էական նվազմանը հասնելու անհրաժեշտության մասին: Նշված ժամանակահատվածում չի հիշատակվել, որ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման վերջին օրերն են:

Սերժ Սարգսյանին են վերագրվել հայ-վատիկանյան հարաբերությունների պատմական զարգացումները, թեև այս հարաբերությունների զարգացման համատեքստում առավել հաճախ հեռուստաընկերությունը հիշատակում է Վատիկանում ՀՀ դեսպան Միքայել Մինասյանին:

Լրատվականը չի լուսաբանել այս օրերին մեկնարկած «Իմ քայլը» և «Մերժիր Սերժին» նախաձեռնությունների իրականացրած գործողությունները և առհասարակ չի անդրադարձել շարժումների գոյությանը:

«Պոստ ֆակտում»

«Արմենիա» հեռուստաընկերությունը «Պոստ ֆակտում» հաղորդման շրջանակում Սերժ Սարգսյանի տասնամյա գործունեության ամփոփումը սկսել է դեռևս հունվարից: Ծաբաթական կտրվածքով լուսաբանելով Սարգսյանի նախագահության մեկ տարին՝ հեռուստաընկերության այս հաղորդումը միայն դրական կերպով է անդրադարձել վերջինիս գործունեությանը:

Մարտի 31-ից ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում «Պոստ ֆակտումը» երկու թողարկումներում ամփոփել է Սարգսյանի նախագահության արդյունքները 2017-ին և 2018-ին: Սերժ Սարգսյանն այս թողարկումներում ներկայացվում է որպես

բարեփոխումներ իրականացնող քաղաքական գործիչ: Հաղորդումը պատմում է Սարգսյանի օրոք ստեղծված «սուպերպոլիտների» մասին: Ընդգծվում է վերջինիս բացառիկությունը՝ ներկայացնելով նրան որպես առաջին քաղաքական գործիչ, «ով ասաց ««և-և» և իրագործեց դա»՝ նկատի ունենալով նրա գործունեությունն արտաքին քաղաքականության բնագավառում:

Ապրիլի 8-ի թողարկմանը ևս անդրադարձ է եղել Սարգսյանի վարած «և-և» քաղաքականությանը: Ներկայացվել է հարցազրույց ՌԴ ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ, որտեղ ռուս պաշտոնյան պատմում է Հայաստանի հաջողված արտաքին քաղաքականության մասին:

Ապրիլի 8-ի «Պոստ ֆակտումի» [թողարկումը](#) ներկայացնում է Սերժ Սարգսյանին որպես «բանակում իրավիճակը հսկողության տակ պահելու հազար ու մի խողովակ ունեցող գերագույն գլխավոր հրամանատար», ով լսում և հոգ է տանում զինվորների խնդիրները լուծելու մասին, կամ որպես «Հայրենիքի պաշտպանի կենտրոն» նախաձեռնության հովանավոր: Միաժամանակ «Պոստ ֆակտումը» ներկայացնում է Սերժ Սարգսյանին որպես Ադրբեջանի դեմ դիվանագիտական հաղթանակներ տանող գործչի: «Պոստ ֆակտումի» հաղորդավարը նաև նշում է, որ «Հայաստանը որոշել է ու դառնալու է մրցունակ ռազմաարդյունաբերական երկիր», և որ դա «գերագույն գլխավոր հրամանատարի գլխավոր նպատակներից է»: «Պոստ ֆակտումի» ապրիլի 8-ի թողարկման 44 րոպեից շուրջ 24-ը նվիրված է եղել Սերժ Սարգսյանին:

Նույն օրերին ընդդիմադիր ուժերի նախաձեռնած քաղաքական շարժմանը հաղորդումն անդրադարձել է շատ կարճ՝ պատմելով միայն պայքարի տևական վերաբերյալ «Ելք» դաշինքում առկա տարաձայնությունների մասին: «Արմենիա» հեռուստաընկերության «Պոստ ֆակտում» հաղորդաշարը անցած երկու ամիսներին պարբերաբար հրապարակել է ռեպորտաժներ՝ նվիրված Սերժ Սարգսյանի նախագահության տաս տարվան: Մշտադիտարկված ժամանակահատվածում հրապարակվել է «Պոստ ֆակտումի» երկու թողարկում:

«Համբերատար բանակցողը»

«Արմենիա» հեռուստաընկերությունն առանձին փաստավավերագրական ֆիլմ է պատրաստել Սերժ Սարգսյանի օրոք Հայաստանի վարած արտաքին քաղաքականության վերաբերյալ: [«Համբերատար բանակցողը»](#) վերնագիրը կրող, 80 րոպե տևողությամբ ֆիլմը եթեր է հեռարձակվել ապրիլի 7-ին՝ փրայմ թայմում: Ֆիլմը պատմում է Սերժ Սարգսյանի «բազմավեկտոր» արտաքին քաղաքականության ունեցած հաջողությունների մասին: Սարգսյանը ներկայացվում է որպես հեռատես քաղաքական գործիչ, ով «հրաշալի աշխատանք է իրականացրել արտաքին քաղաքականության բնագավառում»՝ ապահովելով հարաբերությունները թե՛ արևմուտքի, թե՛ Ռուսաստանի հետ: Ծեշտվում է, որ Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի ստորագրման տապալումից հետո այդ միության դիվանագետները միայն տարիներ հետո ասացին այն, ինչ Սարգսյանն ասում էր արդեն հինգ տարի:

Ֆիլմը պատմում է նաև Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործում Սարգսյանի ունեցած դերի մասին՝ շեշտելով, որ անցնող տասնամյակում այն նոր թափ ու

որակ է ստացել, «ցեղասպանության մասին իրազեկումը հասել է նախկինում չտեսնված մակարդակի»: Որպես Սարգսյանի ունեցած հաջողություն է արձանագրվում՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նախաձեռնությունը, թե՛ դրանց չեղարկումը: Նրա «քաղաքական մեծ կամքին ու համբերատարությանն» է վերագրվում հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ բանակցությունների մեկնարկից հետո սփյուռքի հետ «անխուսափելի պառակտման» հարթումը:

Սարգսյանը ներկայացվում է որպես Հայաստանի անվտանգության երաշխավոր, ով «չեզոքացրել է Ադրբեջանի ազդեցությունը ՀԱՊԿ-ում, գեներացրել է ՀԱՊԿ-ը»:

Ֆիլմը պատմում է, որ նրա նախագահության օրոք Հայաստանն անվտանգություն սպառող երկրից դարձել է անվտանգություն մատակարարող երկիր: Սրան լրացնելու են գալիս ֆիլմում տեղ գտած հարցազրույցները, որոնց միջոցով Սերժ Սարգսյանը ներկայացվում է իբրև մարդ, ով «շատ լավ է պատկերացնում, թե ինչ է անվտանգությունը»: Մյունխենի անվտանգության համաժողովի մասին պատմելիս ընտրված է այդ համաժողովում տեղ գտած քննարկումներից մեկի այն հատվածը, որտեղ Սերժ Սարգսյանը ներկայացվում է որպես «ֆիլմի գլխավոր հերոս»: Պատմվում է, որ նրա օրոք ընդլայնվել և վերընթաց է ապրել Հայաստանի ռազմաքաղաքական հեղինակությունը:

Վավերագրական ֆիլմը պատմում է նաև Հայաստանում Սարգսյանի օրոք գրանցված ժողովրդավարության մակարդակի աճի մասին: Ժողովրդավարական են ներկայացվում Սարգսյանի օրոք Հայաստանում անցկացված ընտրությունները:

Խոսելով Հայաստանի արտաքին քաղաքականության մասին՝ «Արմենիայի» պատրաստած ֆիլմը միտում ունի նաև Սարգսյանին ներկայացնել որպես համաշխարհային նշանակության կարևոր և ազդեցիկ քաղաքական գործիչ: Սիրիային մարդասիրական օգնություն ցուցաբերելուց և խաղաղապահ առաքելություններում ունեցած Հայաստանի մասնակցությունից բացի, հեռուստաընկերության խոսքով, Սարգսյանը նաև «Իրանը և ԵԱՏՄ-ն միմյանց կապող գլխավոր միջնորդն ու երաշխավորն է»:

Հեռուստաընկերությունը որևէ այլընտրանքային կամ քննադատական կարծիք չի ներկայացրել Սարգսյանի նախագահության տարիների մասին: Նրա պաշտոնավարման օրոք եղած որևէ թերացում, բացթողում կամ ձախողում չի մատնանշվել:

«Շանթ» հեռուստաընկերություն

Մշտադիտարկման ենթարկված երեք հեռուստաալիքներից առավել հավասարակշռված լուսաբանում է ապահովել միայն «Շանթ» հեռուստաընկերությունը: Վերջինիս միակ լրատվական հաղորդումը՝ «Հորիզոնը», հիմնականում մատուցում է այսպես կոչված «չոր» լրատվություն՝ առանց լրացուցիչ մեկնաբանությունների և քննադատական վերլուծության, այսինքն գրեթե չի նկատվել Սերժ Սարգսյանի անձի գովաբանում, սակայն չկա նաև «բալանսավորված» լուսաբանում՝ այսինքն այլընտրանքային հայացքների ներկայացում Սերժ Սարգսյանի քաղաքականության վերաբերյալ:

Այսպես, օրինակ, «Հորիզոնի» ապրիլի 6-ի երեկոյան թողարկման ընթացքում [ներկայացնելով](#) Սերժ Սարգսյանի հարցազրույցը արաբական Gulf News պարբերականին, մեկնաբանը թարգմանաբար ներկայացնում է հոդվածից առանձին հատվածներ՝ առանց հավելյալ մեկնաբանությունների, սակայն միաժամանակ առանց կասկածի տակ դնելու հարցազրույցում հնչեցված խոսքերը: Հիշեցնենք, որ հարցազրույցում Սերժ Սարգսյանը խոսել է իր նախագահության 10 տարիների մասին՝ գովերգելով այդ ընթացքում իր վարած քաղաքականությունը՝ որպես անվտանգության երաշխավոր, կամուրջ Արևմուտքի և Ռուսաստանի միջև, ինչպես նաև Հայաստանում իր շնորհիվ գրանցված ներդրումային նպաստավոր կլիման և տնտեսական հաջողությունները:

Մեկ այլ [ռեպորտաժուր](#) ներկայացվում են Gallup International ասոցիացիայի սոցիոլոգիական հարցումների արդյունքները: Դրանում մասնավորապես նշվում է, որ նախագահի «դրական ցուցանիշներն աճել են», իսկ բնակչության 24.8 տոկոսը «Հանրապետական» ցուցակից վարչապետի թեկնածու է տեսնում Սերժ Սարգսյանին՝ նրան ընկալելով որպես անվտանգության երաշխիք և հաշվի առնելով նրա բանակցային կարողությունները:

«Հորիզոնի» ապրիլի 7-ի [ռեպորտաժ](#), թերևս, «Շանթի» մյուս ռեպորտաժներից ամենաշատն է գովաբանել Սերժ Սարգսյանին, որտեղ բազմաբնակարան շենքի բացման արարողությանը ներկա է Սերժ Սարգսյանը: Ընդհանուր առմամբ մոտ 5 րոպե տևողությամբ տեսանյութից տպավորությունն այնպիսին է, որ երիտասարդ ընտանիքները նոր շենքում բնակարան են ստացել Սերժ Սարգսյանի շնորհիվ, այլ ոչ թե գնել արտոնյալ պայմաններով պետական աջակցություն ստացած ծրագրով:

Ուշագրավ է, որ ապրիլի 9-ի «Հորիզոնի» [թողարկումը](#), որում առանցքային տեղ է հատկացված նորընտիր նախագահի երդմնակալության արարողությանը, կարելի է բնութագրել որպես բալանսավորված:

Հարկ է նշել, որ մշտադիտարկման ենթակարկված հեռուստաալիքներից «Շանթը» միակն է, որը, թեև կարճ ու ոչ լիարժեք, բայց որոշակորեն անդրադարձ է կատարել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քայլարշավին: Այս թեման առաջին անգամ «Հորիզոնի» եթերում հիշատակվել է ապրիլի 3-ի [թողարկման](#) ընթացքում: Սակայն, թեև մեկնաբանը նկարագրում է 4 օրվա ընթացքում Նիկոլ Փաշինյանի թիմի անցած ուղին, այնուամենայնիվ չի նշում, թե որն է քայլարշավի նպատակը: «Հորիզոնի» հետագա թողարկումներում այդ բացը լրացվել է, քայլարշավի մասին կարճատև անդրադարձում արդեն նշվել է դրա նպատակը: Բացի այդ, մշտադիտարկվող ժամանակահատվածում մեկ անգամ «Հորիզոնի» տաղավարում [հյուրընկալվել է](#) «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջնորդ Էդմոն Մարությանը, ով մեկնաբանել է իր [հոդվածն](#) այն մասին, թե ինչու չի միանում Նիկոլ Փաշինյանի նախաձեռնությանը:

Եզրակացություն

Այսպիսով, տասը օրերի ընթացքում, ժամը 18:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում մշտադիտարկվածերեք հեռուստաընկերությունների հաղորդումներում չի եղել Սերժ Սարգսյանի վերաբերյալ որևէ քննադատական լուսաբանում: Սերժ Սարգսյանի վերաբերյալ հրապարակված ռեպորտաժների մեծամասնությունը ունի դրական տոնայնություն և չի համապատասխանում

անկողմնակալ լրատվության կանոններին: Միայն «Շանթ» հեռուստաընկերությունն է, որը հիմնականում չեզոք տոնայնությամբ է լուսաբանել Սերժ Սարգսյանին՝ մեկ բացառությամբ:

«Արմենիա» և Հանրային հեռուստաընկերությունները ոչ միայն չեն պահպանել չեզոքության կանոնները իրենց լրատվական հաղորդումների ընթացքում, այլև հեռարձակել են Սերժ Սարգսյանին գովաբանող առանձին հաղորդումներ՝ «Մտքով տուն» և «Համբերատար բանակցողը» հաղորդումները: Միաժամանակ Սերժ Սարգսյանին գովաբանելու համար իրենց եթերաժամանակի առյուծի բաժինն են տրամադրել նաև Հանրային հեռուստաընկերության «360°» և «Արմենիա» հեռուստաընկերության «Պոստ ֆակտում» հաղորդաշարերը:

«Արմենիա» և Հանրային հեռուստաընկերությունները ներկայացրել են Սերժ Սարգսյանին որպես ՀՀ անվտանգությունն ամրապնդած, լուրջ արտաքին քաղաքական հաջողություններ ձեռք բերած անձի: Այս նպատակով կիրառվել են լրատվական մանիպուլյացիայի բազմաթիվ հնարքներ: Այսպես, օրինակ, անվտանգության ոլորտին անդրադառնալիս չեն հիշատակվել 2016թ. ապրիլին հայկական կողմի ունեցած կորուստները, բանակում առկա խնդիրները, հարձակման ընթացքում ի հայտ եկած թերացումները, բանակում առկա կոռուպցիան և այլն: Այս բոլոր խնդիրները, որոնք 2016թ. ապրիլից ի վեր եղել են հանրային քննարկման առարկա, դուրս են մնացել Սերժ Սարգսյանի նախագահության տասը տարին ամփոփող ռեպորտաժներից:

Արտաքին քաղաքականության ոլորտը լուսաբանելիս դրվել է հավասարության նշան ԵՄ և ԵԱՏՄ համաձայնագրերի միջև՝ դրանց ստորագրումը ներկայացնելով որպես «և-և» դիրքորոշման ձեռքբերում, թեև իրականում այս համաձայնագրերը սկզբունքորեն տարբեր բովանդակություն ունեն, իսկ ՀՀ-ի՝ ԵԱՏՄ-ին անդամակցությունը Հայաստանի և Եվրամիության հարաբերությունները զգալիորեն ավելի ցածր մակարդակի վրա է իջեցրել: Ավելին՝ որպես Սերժ Սարգսյանի արտաքին քաղաքականության հաղթանակ է ներկայացվում թե՛ Թուրքիայի հետ պայմանագրի նախաձեռնումը և թե՛ դրանից հրաժարվելը:

Երեք հեռուստաընկերություններից և ոչ մեկը, սակայն, չի ներկայացրել Սերժ Սարգսյանի վերաբերյալ որևէ քննադատական լուսաբանում, այսինքն չկա այլընտրանքային կարծիք՝ Սերժ Սարգսյանի քաղաքականության վերաբերյալ:

Ինչ վերաբերում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քայլարշավին և «Մերժիր Սերժին» նախաձեռնությանը, ապա լուսաբանվել է միայն քայլարշավը, ընդ որում միայն «Արմենիա» և «Շանթ» հեռուստաընկերությունների կողմից: Հանրային հեռուստաընկերությունը երկու նախաձեռնությունների մասին էլ լռել է: «Արմենիան» «Քաղաքացիական պայմանագրի» գործողությունների մասին հաղորդել է միայն «Պոստ ֆակտում» հաղորդաշարի շրջանակներում՝ հպանցիկ կերպով: Փաստորեն, մարտի 31-ից ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում Հանրային հեռուստաընկերությունը վարել է Սերժ Սարգսյանի դեմ ուղղված նախաձեռնությունների վերաբերյալ լռելու քաղաքականություն, «Արմենիա» հեռուստաընկերությունը

մշտադիտարկված ժամանակահատվածում միայն մեկ անգամ է անդրադարձել ընդդիմադիր ուժերի նախաձեռնությանը՝ այն էլ քննադատական լուսաբանմամբ, մինչդեռ «Շանթ» հեռուստաընկերությունն ամնվազն երեք անգամ ներկայացրել է քայլարշավի մասին տեղեկատվություն, սակայն հակիրճ:

Այսպիսով, մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ մարտի 31-ից ապրիլի 9-ն ընկած ժամանակահատվածում ուսումնասիրության առարկա դարձած երեք հեռուստաընկերություններից երկուսը՝ Յանրային և «Արմենիա» հեռուստաընկերությունները ունեն հստակ քաղաքական կողմնորոշում, մինչդեռ «Շանթ» հեռուստաընկերության լուսաբանումը համեմատաբար ավելի բալանսավորված է:

10/04/2018